



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Գ Ր Ի Գ Ո Ր Տ Ա Թ Ե Վ Ա Ց Ի

(1346—1409)



Եկեմբերի 27-ին լրացավ հայ միջնադարի մեծագույն խորհողի, բեղուն մատենագրի, Հայ Եկեղեցու եռամեծ վարդապետի, «անյաղթ ախոյեների սուրբ հաւատոյ» և շնորհալի մանկավարժի՝ Գրիգոր Տաթևացու մահվան 550-ամյակը:

Գրիգոր Տաթևացին եղել է «խառնախառն հատույ և հիմունք Եկեղեցւոյ, աղունք պատուիրանացն Աստուծոյ և լուսատու հոգւոց մերոց վարժապետ և աստուածաբան» կոչված Հայ Եկեղեցու ճշմարիտ վարդապետներից մեկը:

Տաթևացու անունը անխզելիորեն կապված է ժն դարում ծաղկած Տաթևի վանքի և համայնաբանի պայծառության հետ, 1388—1409 թվականներին:

Գրիգոր Տաթևացին Հովհան Որոտնեցու (1315—1386 թ. թ.) ամենատաղանդավոր և պայծառ աշակերտներից մեկն էր, որը նույնիսկ իր ուսուցչի կենդանությանը ճշմանակեց «բարունակապետ», «ամենեցուն գլուխ և ուսուցիչ» (Մեծոփեցի), այսինքն ունկտոր Տաթևի համալսարանի: Տաթևն իր ամենաբեղուն շրջանը բոլորեց Գրիգոր Տաթևացու «դպրապետության» տարիներին, երբ նա, նստած «ի վերայ բարձր և անհրկու ամբիոնի բարունաբանին» և կամ «յաթոռ վարդապետութեանն Հայոց», Ս. Գրոց ուսմամբ, «գետօրէն» քննեցրած աստվածային իմաստությամբ և գիտությամբ «լուսատու էր յամենայն Արեւելս և Ազգս Հայոց և զամենայն աշակերտեալսն»:

Գրիգոր Տաթևացու «մահվան թվականի և ամսաթվի, ինչպես նաև նրա կյանքի և գործունեության առանձին դրվագների ուսումնասիրման համար մեծ արժեք է ներկայացնում նրա վարժը, գրված հավանաբար Մատթեոս Զուղայեցու կողմից, որ պահպանվել է Ներսիսի Մատենադարանի № 6607 ձեռագրի 5ա—6ա էջերում» (Լ. Խաչիկյան, «Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Ա. (1401—1450), Ներսիս, 1955, էջ 102—103):

Տաթևացին ծնվել է 1346 թվականին վայոց ձորում, «ազգաւ Հայկազնի, աշխարհաւ Կրկնակի՝ ի հայրենական տոհմէ Քաջբերունի և մայրենական ցեղն յԱյրարատ գաւառէ, ի գեղաւանէն Փարպոյ»: Մանկույթ նա եղել է «գեղեցկատիպ և ուշիմ, և լի Հոգոյն պարգևօք և յառաջադէմ յամենայն ուսմունս»:

Տաթևացու դաստիարակության և կրթության գործում վեհական դեր է կատարել «մեծ փիլիսոփայն հայոց» Հովհան Որոտնեցի, որն «էառ առ ինքն և արար ըստ հոգոյ որդի և սնոյց ի բարին և ուսոյց զամենայն իմաստս աստուածային Գրոց և արտաքին սոփեստից»:

Դեռևս 15 տարեկան խոստումնալից և ուսումնատենչ պատանի, Տաթևացին առաջին անգամ հանդիպում է Որոտնեցուն և ընդմիջտ իր կյանքը և գործունեությունը կապում նրա հետ:

Որոտնեցու շնչի և նայվածքի տակ իմացապես անում, հոգեպես կազմակերպվում է

Տաքևացիներ և նրա ցանկությամբ և հրամանով սարկավագ է ձեռնադրվում, «ի հանգիստ դամբարանի Սուրբ Լուսաւորչին, ի Սեպուն Լեռան»:

Ապա Ռոտմեցիներ նրան տանում է Երուսաղեմ ուխտի՝ «յերկրագործիքին սուրբ տեղեացն, և արար ֆահաւայ, յանուն Լուսաւորչի Կորնելիոս Գրիգոր, և դարձեալ բերեալ առ գերեզմանն Սուրբ Լուսաւորչին՝ արար վարդապետ՝ աղ համեմիչ և լոյս լուսաւորիչ Տանն Աստուծոյ»: Տաքևացիներ Ռոտմեցուց է ստացել և՛ իր մասնավոր և՛ ծայրագոյն վարդապետության գավազանի իշխանությունը:

Այնուհետև Ռոտմեցիներ Տաքևացու բերում է «յաշխարհն Սիւնեաց, և զկնի մահուանն իւր եւ հրամանն նստել յԱրքո մեծ համալսարանին Եսայայ և Բարսեղապետ Հայոց Մեծաց»:

Տաքևացիներ 28 տարի անընդհատ աշակերտում և գործակցում է Ռոտմեցուն և իր սուրբ ձեռներով 1388 թվականին գերեզման դնում իր «տիեզերայոյս վարդապետ»-ին, նրա մահվան տխուր առիթով գրելով «Ներբողեան ողբերգաբար ոգեալ ի քաղամն տիեզերայոյս վարդապետին իւրոյ Յօհաննէս Ռոտմեցոյ» (Գիրք ֆարգութեան որ կոչի Ամարան հատոր, Կոստանդնուպոլիս, 1741 թ., էջ 710):

ՏԱԹԵՎԱՅԻՆ ՄԵՄ Է մեր Եկեղեցու պատմության և մատենագրության մեջ նախ որպես ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԱՐԴԱՊԵՏ: Իր աշակերտները իրավամբ նրան անվանել են «շորորոյ լուսաւորիչ Հայոց, տիեզերաց անշիշանելի նրագն», որ իր ֆարգչական, մատենագրական, մանկավարժական, գիտական և փիլիսոփայական վաստակով և «ԱՆՈՒՄԱՄԲ և ԻԲՕՔ ելից գտելի նորա (Գրիգոր Լուսավորչի), լուսաւորելով իմաստութեան լուսովն զԱզգս Հայոց... և արար գգիւս քաղամն Երկնաշէնին վարդապետութեամբ ի պէտս Հայաստանեայց Եկեղեցոյ, ի գարդ և ի պայծառութիւն աշակերտացս նշմարտութեան... և բանս խրատականս, և իմաստ և հանճարս, և իմաստնացոյց զԱզգս Հայոց... և ուղղեաց զկարգս և զանմանս Եկեղեցոյս»:

ՏԱԹԵՎԱՅԻՆ ՄԵՄ ԷՐ ՈՐՊԵՍ ՔԱՐՈՂԻԶ ԵՎ ՔԱՐՈՑԱՆՈՍ: Նրա հոգեշան ֆարգները, հառերը, կրօնական բովանդակությամբ դասախոսությունները ամփոփել են նրա «Քարոզգիրք»՝ առունք կրող «Ձմեռան» և «Ամարան» երկու հատորներում, առաջինը տպված 1740 և երկրորդը՝ 1741 թվականին Կոստանդնուպոլսում: Այս երկու մեծ ֆարգագրերը պարունակում են 344 ֆարգներ, մեծ մասամբ նրա չրչից կամ բարայկերական և ուսուցողական ուղղությամբ, որտեղ խոսվում է

պահի, Եկեղեցու խորհուրդների, սրբերի և նրանց տոների, ինչպես նաև «Վասն իմաստութեան», «Վասն երիտասարդաց», «Վասն սիրոյ», «Վասն շարժման երկրի», «Վասն առաքիլութեան», «Վասն լեզուի», «Վասն հալալ ամուսնութեան», «Վասն արդար վահառաց և կոռոց» և այլ կրօնական, հասարակական, գիտական հարցերի մասին:

Իսկ Տաքևացու «Գիրք հարցմանց»-ը, տպված Կոստանդնուպոլսում 1729 թվականին, ըստ ակադեմիկոս Հրաչյա Անադյանի գնահատման, «մի տեսակ համայնագիտարան է», իր ժամանակի համար:

«Գիրք հարցմանց»-ը, որ բաղկանում է մեծ և փոքր երկու մասից, «հարց» ու պատասխանով հորինված մի դասագիրք է իսկապես այն բոլոր խնդիրների մասին, որ հետաքրքրելիս են եղել այն ժամանակի հարցասերներին: Տաքևացիներ «չի բավականացել բերանացի դասախոսելով, իր դասախոսածն ավանդել է և՛ գրավոր» (Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, II հատ., 1946 թ., էջ 361): Այս կապիտալ աշխատությունը խմբագրելիս Տաքևացիներ օգտվել է և արաբին փիլիսոփայությունից և ապա «գորէն մշակաց քաղմահաւ պտղոց, կամ փունջ մի անուշահամ բազմերանգ ծաղկանց, կամ չնչին թռչնոց գլուխս մեղու, կամ որպէս զոմայս այրայն տառապեալ գոյի, աղերս բնծայեցի ի գանձանակն նոյսութեան իմաստասէր և նշմարտասէր Եկեղեցոյ Հայաստանեայց և բնբերցասէր մտաց»:

«Գիրք հարցմանց»-ի բովանդակությունը պերճախոս վկան է այն բանի, որ Տաքևացիները է «անդադար ընթերցող, անպարապ գրող, մտքով ստեղծագործող... որպէս մատենագիր՝ անկորնելի և անբառամ, ինքն ըստ վաստակոց իւրոց և ֆրանց անխնշ աշխատասիրութեանց»:

ՏԱԹԵՎԱՅԻՆ ՄԵՄ ԷՐ ՆԱԵՎ ՈՐՊԵՍ ՇՆՈՐ-ՀԱՆԻ ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՈՒՍՈՒՑԱՆՈՂ: Նրա «դպրագրութեան» օրով Տաքևի համալսարանը դարձավ հայ մանկավարժության և մշակույթի ամենապայծառ օջախներից մեկը: Նա բերունդներ է կրթել և դաստիարակել. «մինչև անգամ յամենայն երկրէ և ի ֆաղափաց կեկալ պարապէին առ ռոս նորա»: Իզուր չէ, որ Տաքևացիները կոչվել է ՎԱՐԺԱՊԵՏ ԱՄՆՆԱՅՆ ՀԱՅՈՑ: «Տաքևի դպրոցի աշակերտներից շատերը մեծ պարծանքով են խոսում այն մասին, որ իրենք աշակերտել են Տաքևացուն, նրա ձեռքի տակ են կրթվել ու դաստիարակվել: Ժամանակակիցները մարդկանց կրթության ու դաստիարակության աստիճանը որոշում էին Տաքևի դպրոցի համեմատությամբ և շատ անափնություններ կապում էին Տաքևացու անվան

հետ: Տաքեացիներին հաղափական, հասարակական և էկոլոգիական կյանքում մեծ ներդրակություն էր վայելում» (Ա. Խ. Մովսիսյան, «Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության», Հայպետուսմանկհրատ, Երևան, 1958 թ., էջ 130):

Տաքեացիներն աշխատել է միշտ գտնել ուսուցման նոր և ավելի պրոգրեսիվ մեթոդներ, ուսուցման նյութը աշակերտների գիտակցության հասցնելու համար ավելի նիշտ և ուղիղ նախապահով: Դիպակտիկական այս ձգտումը կա նաև նրա մատենագրական ողջ վաստակի մեջ: Այդ մասին է վկայում նրա մանկավարժական գեղեցիկ և բովանդակալից ուսումնասիրությունը՝ «ՍՍՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ»: «Այս գործը մի բացառիկ երևույթ էր միջնադարի հայ մանկավարժական գրականության մեջ, ուր կան դաստիարակչական շատ արժեքավոր մտեր: Այս աշխատության մեջ առավել պարզությամբ է երևում 14—15-րդ դարերի մանկավարժի հայացքները: Դպրոցական գործի ղեկավար, դաստիարակ Տաքեացին առաջ է հաշում ժամանակակից կյանքին վերաբերող ու հուզող շատ հարցեր և ձգտում է այդ հարցերը լուծել դաստիարակության միջոցով» (Ա. Խ. Մովսիսյան, «Ուրվագծեր...», էջ 152):

Տաքե բարձր տիպի դպրոց դարձավ Տաքեացու շանքերով: Ուներ իր կայուն ուսման ծրագիրը, որոշվել է սահմանվել էին այնտեղ ուսուցվող առարկաները: Հայաստանի ամենանշանավոր ուսումնական հաստատությունը՝ Տաքեի համալսարանը շարունակում է գործել մինչև 1408 թվականը, Գրիգոր Տաքեացու «դպրակալության» տակ: Համալսարանը ուներ երեք ֆակուլտետներ՝ «ուսումնադասաններ», որոնցից մեկում Տաքեացին «ուսուցանելը գնալիս էր գիշ վարդապետաց գերաժտությունից փոքրալուր ձայնի եղանակա», այսինքն է՝ երաժշտության տեսություն և՛ երգեցողություն: Երկրորդում՝ «նկարագրություն պատկերաճանություն և զանազան նկարչություն», այսինքն՝ մանրանկարչություն, դիմանկարչություն, տեսարաններ (պեյզաժ), նկարաճանություն, գրեթե զեղարվեստական ձևավորում, գրչության արվեստ, գեղագրություն: Երրորդ ֆակուլտետում ուսումնասիրում էին «զենբրին և զարտաֆին գրեանս, ի մասնառի գշին և զնոր Կտակարանս, ներֆին և արտաֆին մեկնութամբ, քարզմանութամբ», այսինքն արտաֆին գիտություններ՝ հատկապես «լուծմունք» Արիստոտելի, Փլյոնի և Պարփյուրի, փիլիսոփայություն, հարտասանություն, բերականություն, պոետիկա, տրամաբանություն, մանկավարժություն, ինչպես նաև մայրենի

լեզու, գրականություն, պատմություն, մի շարք բնական գիտություններ:

ԺԵ—ԺԶ դարերում «Հայաստանում և Հայաստանից դուրս բառասուն նշանավոր վանքերի ու սրանց կից դպրոցների գոյս կանգնած էին Տաքեացու աշակերտները: Հարյուրից ավելի մատենագիրներ, բանաստեղծներ, ուսուցիչներ, գրիչներ, նկարիչներ, երաժիշտներ, թուրք կոկող ու գիրք կազմողներ և հասարակական տարբեր բնագավառների գործիչներ Տաքեացու աշակերտներն են եղել, որոնց թողած հիշատակները հասկն են մեզ» (Մովսիսյան, «Ուրվագծեր...», էջ 137):

Ըստ Առաֆեյ Սյունեցու վկայության, Տաքեացին դասաւան էր մտնում խորապես պատրաստված, կարդացած, «ի գիշերի խոկմամբ զիմաստս գրոց հաւաքէր, և տուրն շենն աշակերտացն պատմէր», և ըստ մի այլ աշակերտի վկայութեան՝ իր բովանդակալից դասախոսություններով «ռոգէր երաշտացեալ անդս հոգոց կարօտեոց», և «աշխարհ ամենայն կարօտ էր լսել զբանս բերանոյ նորա»:

Որոտնեցին, Տաքեացին և նրանց աշակերտները ապրում և գործում էին տազնապի, նեղության ու լենկթմության արշավանքների և ունիտոների տակնուվրայության ժամանակ, բայց ուժերի մեծ լարումով, անսպառ եռանդով, կյանքի գնով հանախ, աշխատում էին զարգացնել գիրն ու գրականությունը, վառ պահել հայ մշակույթի և լուսավորության նրազը մեր վաճական դպրոցներում, «նույնիսկ թշնամու բանակների կողմից խոնապահար փախուստի օրերին, և նրանց անից անձավներում և լեռնածերպերում պատսպարվելով, շարունակում էին իրենց ուսուցչական և վարդապետական գործունեությունը Հովհաննես Որոտնեցու և Գրիգոր Տաքեացու անվանի աշակերտներից շատերը»:

Առանձնապես բուռն էր Տաքեացու պայքարը ունիտոների դեմ:

Տաքեացուն անվանել են «սին և ախոյեան Հայ Եկեղեցու»: Իրապես նա թե՛ իր գրչով, թե՛ իր բարոգությամբ պայքարել է ունիտոների դեմ, որոնք մի դար առաջ եկել էին Արևելք և Հայաստան, որպես Կաթոլիկ եկեղեցու պրոպագանդիստներ և աշխատում էին կեղծ լուսավորության և կրօնական փառաշունչի թափանցիկ փողի ներքո, կաթոլիկական ոգով թունավորել Հայ Եկեղեցու խաղաղ կյանքը, պառակտել մեր ժողովրդի ազգային միասնությունը, աղքատել մեր մեծասման Հայոց լեզուն, գերել հայ հոգիները, ապա ֆիզիկապես նվաճելու և ստորկացնելու համար Հայոց երկիրն ու ժողովուրդը:

Տաքեյան աշակերտությունը մեկ մարդու նման ոտի կանգնեց այս վտանգի դեմ և պաշտպանեց «նայադավան ուղղափառությունը» (Օրմանյան):

Գրիգոր Տաքեյանը, որ գլխավորում էր պայքարը ունիտոսների դեմ, այդ պայքարը համարում էր նաև ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐ, որպես հայ ժողովրդի և Հայ եկեղեցու ինքնուրույնության, անկախության պայքար:

Տաքեյանը եղել է միաժամանակ Հայ եկեղեցու միասնականության ամենաշեմ պաշտպաններից մեկը: Նա առաջինը հղացավ և ծրագրեց Հայրապետական Աթոռի Սսից էջմիածին հայրենադարձության փրկարար ծրագիրը, այդ ուղղությամբ անդուլ ջանքեր քափեց նա, իսկ այդ գաղափարը իրականացրին իր մեծանուն աշակերտները: Մեծոփա վանքի վանահայր Թովմա վարդապետ Մեծոփեցիին և Հերմոնի վանքի առաջնորդ Հովհաննես վարդապետ Կոյունիկը կամ Հերմոնացիին, 1441 թվականին Ս. էջմիածնում գումարված Ազգային-եկեղեցական ժողովի որոշումով:

Տաքեյանը մտածում էր, որ Հայ եկեղեցու վերանորոգության հիմնական ազդակներից մեկը Հայրապետական Աթոռի հայրենադարձությունն է և եկեղեցու միասնականության վերականգնումը:

Այս մտածումներով, երբ Տաքեյանը 1408 թվականին 104 աշակերտ-վարդապետներով Տաքեից եկավ Մեծոփ դասախոսելու՝ և «գերիս գիրս մեկենաց դասի, զԱնտառանն Յովհաննու, զԴիրս Յովթայ նահատակին և զգիրս գրչութեան երկոխան վարդապետացն Գեորգայ Լամբրոնացոյն և Արիստակեսի» (Թովմա Մեծոփեցի), միաժամանակ նա զբաղվեց ազգային եկեղեցական հար-

ցերով, և հատկապես «ի սոյն ժամանակի ի խնդիր ելեալ վասն կապանաց Աղբամարայ» հարցով: Տաքեյանը այս առթիվ գրեց «Վասն Աթոռոյն Աղբամարայ, որ էին ի ներքոյ բանադրանաց» գրվածքը և ապա «մեծանաղէս ժողով արարեալ արձակեաց զամենեսին ի կապանաց հնոց կաթողիկոսացն մերոց», ինչպես վկայում է Մեծոփեցիին: Այսպիսով, Տաքեյանը ջանքերով, «անհնազանդ Աթոռն Աղբամարայ» դարձավ «ի հնազանդութիւն»:

Տաքեյանը միաձուլ ամբողջություն է որպես Հայ եկեղեցու վարդապետ, մատենագիր, փառագիշ, բարոյախոս, մանկավարժ, փրկիստփա և հասարակական գործիչ:

«Գրիգոր Տաքեյանը, — գրում է Օրմանյան սրբազանը («Ազգապատում», հատ. Գ, էջ 2028), — Հայ եկեղեցվո երանաշնորհ վարդապետներուն շարքին վերջինն է, փառաբանված և տոնված հատուկ հիշատակով և գովված ԵՌԱՄԵՄ կոչմամբ, որ գրեթե մակդիր անուն մըն է դարձած»:

Վեհափառ Հայրապետի հրամանով, երբ խորին հարգանքով և երախտագիտությամբ պանծացնում ենք հիշատակը «Մերոյն Գրիգորի Տաքեյանի՝ նշմարտութեան վարդապետի, գերահանճար հոեւորի և անյաղք ախոյեների սուրբ հաւատոյ», նրա մահվան 550-ամյակի առթիվ, մեր սրտացին մաղբանքն է, որ Տերը այժմ էլ հարուցի Տաքեյանի և նրա արժանավոր աշակերտների ոգով և նախանձահոգությամբ դաստիարակված մշակներ իր այգու համար, նշմարտության վարդապետներ, սուրբ հավատի ախոյաններ՝ ի պայծառություն Հայ եկեղեցու և ի մխիթարություն հայ հավատացյալ ժողովրդի:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

